

Խօսելով Պետտիգորսկի մօտ գտնուող մի լեռան մասին՝ հեղինակը անուանում է նրան «Մաչդուտկա», փո-

խանակ «Մաչուկ» անուանելու, ինչպէս ընդունւած է անուանել նրան։
Ս. Բ.

Հեղինակն— «Վարելահողը պարարտացնելու միջոցներ»։ Թարգմանեց Յովհ. Արաբաջեան։ Ալէքսանդրապոլ, տպար. Սանդեանցի 1892 թ.։

Այս փոքրիկ գիրքը՝ բաղկացած ընդամենը 27 երեսներից՝ պարունակում է իւր մէջ տարրական տեղեկութիւններ զանազան պարարտացնող նիւթերի մասին։ Ընդհանրապէս ասած՝ գիրքը գրւած է բաւարար կերպով և կարող է օգտաւէտ լինել հասարակ ժողովրդի համար, թէև նրա մէջ կան նաև մի քանի աչքի ընկնող թերութիւններ։ Օրինակ հողի («հանգստանալու») մասին բերւած հալեացքը թերի է։ Խօսելով այդ խնդրի մասին հեղինակը համեմատում է հողի («հանգստանալը») ձիու հանգստանալու հետ, որը սխալ է։ Ահա ինչու։ Ձիու հանգստանալու ժամանակ նրա մարմինը ամենևին չի հարստանում սննդական նիւթերով (եթէ միայն նա միևնույն ժամանակ կերակուր չի ընդունում)։ Ընդհակառակը՝ հողը հանգստանալով հարստանում է սննդական նիւթերով և այդ առաջանում է նրանից, որ հողի մէջ գտնուող բոյսերի մնացորդները կամ բարդ հանքալիւն նիւթերը, որոնք պարունակում են իրանց մէջ բոյսերի համար սննդական նիւթերը, լուծուած են ժամանակի ընթացքում ու ապառաջ իրանց միջից սննդական նիւթերը։

Այդպիսով՝ թէ հողի հանգստանալու ժամանակ և թէ պարարտացնելու գէպընտ հողը հարստանում է սննդական նիւթերով, տարբերու-

թիւնը միմիայն նրանումն է, որ հանգստանալու ժամանակ հողը անհամեմատ աւելի դանդաղ է հարստանում սննդական նիւթերով քան երբ նրան պարարտացնում են։

Մի ուրիշ տեղ հեղինակը՝ խօսելով կենդանիների աղբի մասին նկատում է, որ նրան (աղբը) հարկաւոր է պահել փոսերում։ Թէև այդ միջոցը երբեմն գործ է ածուած, սակայն նա այնքան էլ օգտաւէտ չէ. անհամեմատ աւելի լաւ է լինում, երբ աղբը պահուած է գետնի վերայ դարսած կոտերում։

Ինչ վերաբերում է թարգմանական լեզւին, նա պարզ է ու մատչելի հասարակ դասի համար, թէև ունի անհարթութիւններ։

Մի նկատողութիւն էլ։

Այդ գրքի ընթերցողը իմանում է միայն, որ դա մի թարգմանութիւն է, բայց թէ ո՞վ է նրա հեղինակը, կամ թէ թիւն լեզւից է թարգմանած, այդ մնում է անչալտ։ Եւ պէտք է ասել, որ այս տեսակ վարմունքը առաջինը չէ մեզանում. հալ թարգմանիչներից ոմանք ունին սովորութիւն անչալտ թողնել հեղինակի անունը։ Միթէ ամօթ չէ օգտուել մի որ և է մարդու աշխատանքից, չբարեհաճելով միևնույն ժամանակ գոնէ չիչել այդ մարդու անունը։

Ս. Բ.